ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի հյուրեր, ավագանու անդամներ, համագյուղացիներ.

2016 թվականի ընթացքում Տարոնիկ համայնքում իրականացվել են աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են եղել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը:

2016 թվականի ընթացքում Տարոնիկի գյուղապետարանը իրականացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության, Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից ընդունած որոշումները, զգալի աշխատանքներ է իրականացրել համայնքի առջև դրված խնդիրների բարեհաջող լուծման համար: Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է բնակչության կոմունալ–կենցաղային պայմանների բարելավման հարցերը:Համայնքի փողոցներում շաբաթական երկու օրյա գրաֆիկով կազմակերպվում է աղբահանություն՝պահպանելով համայնքի սանիտարահիգենիկ նորմերը:

2016 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել են Բանակի տոնին, Մարտի 8-ին , Եղեռնին և Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառումներ:

Մարտի 8-ի կապակցությամբ գյուղապետարանի և դպրոցի բոլոր կին աշխատողներին հանձնվել են նվերներ և ծաղկեփնջեր:

Բոլորիս համար ավանդույթ դարձած վերջին զանգի առթիվ ինչպես անցած տարիների ընթացքում ,այնպես էլ այս տարի մեր շրջանավարտները և ուսուցիչները եղան գյուղապետարանի

ուշադրության կենտրոնում՝ նրանց համար կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ ավարտական երեկո , էքսկուրսիա Հայաստանի տեսարժան վայրեր:Հունիսի 1-ին Երեխաների Պաշտպանության Միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում համայնքի բոլոր փոքր երեխաների մասնակցությամբ:

- Համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվում է ամենօրյա ընդունելություն:
- 2016թվականի ընթացքում համայնքի ավագանու կողմից կայացել է թվով հինգ նիստ, որոնց որոշումները հաստատվել են առանց առարկումների:
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 25 որոշում և արձակվել է 9 կարգադրություն: Համայնքի բնակչությանը տրամադրվել են թվով 262 բազմաբնույթ տեղեկանքներ:
- Ստացվել է 197 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և պատասխանվել ըստ կարգի:
- Գյուղապետարանից ուղարկվել է 99 պաշտոնական գրություն:
- Ստացվել է 34 դիմում, որոնք քննարկվել են և ստացել համապատասխան լուծում:
- Պարբերաբար կազմակերպվում է համայնքի հանրային սննդի և առևտրային կետերում ստուգումներ, որոնք համապատասխան եզրակացություններով, կից գրությունով ամեն եռամսյակ ուղղարկվում է մարզպետարան:
- Համայնքի ղեկավարին է դիմել համայնքի բնակչության մեծ մասը տարբեր կենցաղ կոմունալ հարցերով և ստացել բավարար պատասխաններ իրենց հուզող հարցերի շուրջ:
- Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 18 անձից որոնցից ութը համայնքային ծառայողներ են, մեկը համայնքի ղեկավարի տեղակալ, պայմանագրային և տեխնիկական աշխատողներ:

- Գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզը 2014թ. չի գործում շենքի վթարային լինելու պատճառով :
- Համայնքը ունի գրադարան 4290 կտոր գրականությամբ, որից օգտվում են 390 ընթերցողներ :

Ֆինանսական բաժին – 2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վճարվել է 10835.8հզ դրամ աշխատավարձ:

Համայնքի առավել անապահով բնակիչներին տրամադրվել է սոց. օգնություն 2830.0 հզ դրամ: Սպորտ և երիտասարդական ծրագրեր հոդվածից ծախսվել է 2010.0հզ դրամ:

Կատարվել են այլ ծախսեր ապարատի պահպանման, ապրանքների գնման և ծառայությունների ձեռք բերման համար 9896.8 հզ դրամի չափով:

2016թվականի համար հողի հարկը նախատեսվել է 4500.0հզ դրամ որից հավաքագրվել է 365.6 հզ դրամ , գույքահարկը նախատեսվել է 3430.6հզ դրամ որից հավաքագրվել է 1848.5 հզ դրամ , վարձակալական հողի հարկը նախատեսվել է 200.0հզ դրամ որից հավաքագրվել է 2.1հզ դրամ :Հարթեցվել և փոսալցվել են գյուղի գրունտային փողոցները: Վերանորոգվում է գյուղի գերեզմանոցի տարածքը :

Համայնքն ունի հետևյալ հիմնախնդիրները

1.Խմելու ջուրը

2. Մանկապարտեզի վերանորոգումը

3.Կուլտուրայի տան հիմնանորոգումը

4.Ճանապարհների ասֆալտապատումը

Հիմախնդիրների լուծման համար պարբերաբար դիմել ենք համապատասխան վերադաս մարմիններին և ուարկվել են գրություններ Արմավիրի մարզպետարան: